ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 հուլիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

96
(2762)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ «ՄԱՄԻՍ ՀՈՐ» ԵՎ ԷՐԴՈՂԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՆՔՈՒՄ

«Երեւան դարձած, ի՛մ էրեբունի,
Դարեր ես անցել,
Բայց մնացել ես պատանի:
Քո Մասիս հորով,
Քո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երեւան». այս տողերը 2017 թվականին երգում էր Նիկոլ Փաշինյանը՝ որեւէ կարեւոր իրադարձությամբ չնշանավորվող «Ելք» դաշինքի ավագանու ընտրություններին ընդառաջ: Հիշեցնենք, որ դաշինքի անդամ մի շարք թեկնածուներ՝ Արայիկ Հարությունյանը, Տիգրան Ավինյանը, Մխիթար Հայրապետյանը, Ալեն Սիմոնյանը, Նիկոլ Փաշինյանի հետ թողարկեցին երգ՝ հայրենիքին, մայրաքաղաքին ու նրա պետական խորհրդանիշներին գովաբանող տեքստով: Ու թերեւս ամեն ինչ կշարունակեր մնալ այսքան վառ ու գունավոր, քանի դեռ մայր Հայաստանի խորհրդանիշները գովերգող այսօրվա վարչապետը՝ Նիկոլ Փաշինյանը, հերթական անգամ չմոռանար պատառիկներն իր անցյալից:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ԱԺ-ում 2022 թվականի պետբյուջեի կատարողականի քննարկման ժամանակ իր ելույթում հնչեցրեց հերթական վիճահարույց հայտարարությունը՝ անդրադառնալով Գեղամ Մանուկյանի այն խոսքին, որ եթե հայրենի իշխանությունները «կադաստրի թուղթ» են ման գալիս, ապա այդ թուղթը մեր զինանշանն է: ՀՀ վարչապետը հայտարարեց, թե մեր զինանշանը ինքը համարում է 1991 թվականին ձեւավորված պետության հետ կապ չունեցող մի պատկեր ընդամենը, մինչդեռ 2017 թվականին երգում էր «Մասիս հոր» մասին, «Արաքս մոր» մասին եւ ունեցած դարավոր պատմության մասին:

Եւ ստացվում է, որ, անցնող տարիների ընթացքում ավելացած հոգսերի, փոփոխված պաշտոնների ու պաշտոնյաների ֆոնին, փոխվել է նաեւ հարգանքն ու ընկալումը սեփական պետության խորհրդանիշների նկատմամբ:

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի նախկին ռեկտոր Դավիթ Խիթարյանի պաշտոնը վերականգնվել է: Մեր աղբյուրները նշում են, թե այն քրեական վարույթը, որը նախաձեռնվել էր նրա նկատմամբ, կարճվել է: «Ժողովուրդ» օրաթերթն այս առնչությամբ կապ է հաստատել ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորի պարտականությունները կատարող Անժելա Նուշիկյանի հետ, որը մեզ հայտնեց, որ Դավիթ Խիթարյանի հետ կապված պաշտոնական որեւէ տեղեկություն չի ստացել, այդ հարցի հետ կապված որեւէ տեղեկություն չունի: Հիշեցնենք, որ ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իրավապահները գործընթաց են սկսել բուհերի ռեկտորների դեմ: Առաջին մեղադրյալը Ֆիզկուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ռեկտորն է: Գլխավոր դատախազությունը, հանցանքի կատարումը վկայող փաստերի հիման վրա, հսկող դատախազի կողմից 2023թ. մայիսի 2-ին որոշում էր կայացրել Դավիթ Խիթարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին: Փորձեցինք նաեւ Խիթարյանից պարզել տեղեկությունները, որը հայտարարեց. «Ես նման տեղեկություն չունեմ, ինձ փաստաբանս նման բան չի ասել»: «Ժողովուրդ» օրաթերթը Գլխավոր դատախազությունից փորձեց պարզել՝ դատախազությունը պարտվել է ռեկտորի գործով, եւ ռեկտորի լիազորությունների դադարեցումը ապօրինի է համարել: Ի պատասխան՝ դատախազությունից հայտնեցին, որ այդ որոշումը բողոքարկել են ՀՀ վերաքննիչ դատարան:

2020թ. 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ԱԺ քննիչ հանձնաժողովի շուրջ կրքերը դեռ չեն հանդարտվում, պարբերաբար նոր աղմկահարույց բացահայտումներ են լինում, բայց ոչ թե պատերազմի հանգամանքների կամ իշխանության կառավարման անկարողության, այլ հենց հանձնաժողովի եւ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի գործունեության հետ կապված: ԱԺ անվտանգության եւ պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, որը նաեւ ղեկավարում է 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ԱԺ քննիչ հանձնաժողովը, պարբերաբար հայտարարում էր, թե հրավեր է ուղարկել մի շարք զինվորականների եւ բարձրաստիճան պաշտոնյաների, բայց վերջիններս չեն եկել քննիչ հանձաժողով: Քոչարյանը հրապարակել էր զինվորականների եւ բարձրաստիճան նախկին պաշտոնյաների անունները, որոնք, ըստ նրա, վախենում են գալ ԱԺ: «Զինվորականներ կան, որոնք վախեցած են, օրինակ՝ Տիրան Խաչատրյանը, որը հրապարակայնորեն հրաժարվել է գալ նիստին: Արտաքին քաղաքականության հարցերով ես հրավիրել եմ Վարդան Օսկանյանին, որը հրաժարվել է, բայց մենք նորից կուղարկենք հրավերգ Արցախի հետ կապված լսումների ժամանակ ինքը պետք է բարի լինի, գա, որովհետեւ շատ հարցեր առնչվելու են ԱԳՆ-ի իրականացրած քայլերին»,- հայտարարել էր նա: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում, սակայն, Տիրան Խաչատրյանը հերքեց Անդրանիկ Քոչարյանին՝ պնդելով, որ իրեն մինչ օրս հրավեր չի եկել: Տիրան Խաչատրյանը մանրամասնեց, որ իրեն այս ընթացքում զանգահարել է Անդրանիկ Քոչարյանի քարտուղարը, հարցրել բնակության հասցեն, որպեսզի քննիչ հանձնաժողով գալու հրավեր-նամակ ուղարկեն, սակայն այդպես էլ հրավեր չի եկել. «Ես ունեմ մի բնակարան, մեկ հասցե, որտեղ գրանցված եմ եւ ապրում եմ, ինձ երբեւէ որեւէ կառույցի կողմից նամակ չի եկել, ինձ հրավեր չի եկել»: Այսինքն՝ Անդրանիկ Քոչարյանը հրապարակավ ստել է՝ ասելով, թե մարդիկ չեն ներկայանում նիստերին: Թեեւ Տիրան Խաչատրյանը մեզ հետ զրույցում հայտարարեց, որ «եթե հրավերը հասնի էլ, միեւնույնն է, չեմ գնալու»: Փորձեցինք կապ հաստատել նաեւ Անդրանիկ Քոչարյանի հետ՝ հասկանալու, ի վերջո, հրավեր ուղարկվել է Տիրան Խաչատրյանին, թե ոչ, սակայն վերջինս, լսելով «Ժողովուրդ» օրաթերթի անունը, միանգամից «հուզվեց»: «Չի հետաքրքրում՝ «Ժողովուրդ» օրաթերթից եք, թե «տիեզերքից», ես հեռախոսով մեկնաբանություն չեմ տալու»,- անգամ հարցը չլսելով՝ Քոչարյանը նման տարօրինակ պատասխան տվեց ու անջատեց: Թերեւս նյութը կարդալուց հետո մի բոցաշունչ տեքստ կիրապարակի ՔՊ-ական պատգամավորը, իսկ մինչ այդ նկատենք, որ տպավորություն է, թե Անդրանիկ Քոչարյանն այս հանձնաժողովն օգտագործում է ոչ թե պատերազմի հանգամանքներն ուսումնասիրելու ու իրականությունը բացահայտելու, այլ, հակառակը, իրականությունը խեղաթյուրելու, փաստերը կոծկելու, Նիկոլ Փաշինյանին արդարացնելու եւ նոր մեղավորներ նշանակելու համար:

Աղմկոտ պատմություններով հայտնի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը, ըստ պաշտոնական տվյալների, իր անունով ո՛չ բնակարան ունի, ո՛չ էլ ավտոմեքենա: Նա Հայաստանում գտնվում է պատկերավոր ասած «հյուրախաղերով»: Բանն այն է, որ թաղապետ Սամվել Ղուկասյանը նախկինում ապրել է ԱՄՆ-ում եւ միայն վերջերս է Հայաստան եկել՝ նշանակվելով Կենտրոն վարչական շրջանի ղեկավար: Ըստ նրա կողմից ներկայացված պաշտոնական հայտարարագրի՝ նախկինում Ղուկասյանը Հայաստանում ոչինչ չի ունեցել: Միայն Թաղապետ դառնալուց հետո շինարարական «ՍԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ից տարվա վերջում 38 մլն 118 հազար դրամի փոխառություն է վերցրել: Նա այդ ժամանակ արդեն վարչական շրջանի ղեկավար էր: 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նրա վարկի մայր գումարի մնացորդը կազմել է 73 հազար դոլար: Այդ հիփոթեքի դիմաց նա ստացել է կառուցվող բնակելի համալիրից անշարժ գույքի գնման իրավունք: Այսինքն՝ նորակառույց բնակելի շենքում տուն է ձեռք բերել մոտ 100 հազար դոլարով, որից 27 հազարը մեկ տարվա ընթացքում մարել է թաղապետի համեստ աշխատավարձով: Անհավանական է, իհարկե, բայց, ըստ պաշտոնական տվյալների, Սամվել Ղուկասյանը 2022 թվականին որեւէ ծախս չի կատարել: Ինչպես է ապրել (ատկատներո՞վ, ռեկետո՞վ, թե՞ ԱՄՆ-ից ուղարկված գումարներով)՝ պարզ չէ: Համենայնդեպս, հայտարարագրում չի երեւում, եւ չհիմնավորված ապօրինի եկամուտների կասկածներ են առաջ գալիս, որի մասով, կարծում ենք, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն անելիք ունի: Տեղեկացնենք, որ թաղապետի բանկային հաշիվներին տարվա սկզբում զրո դրամ է եղել, իսկ տարեվերջին արդեն 1 մլն դրամից ավելի գումար է գոյացել հաշվին: Իհարկե, Սամվել Ղուկասյանը կանխիկ գումար հայտարարագրել է՝ 170 հազար դոլար եւ 10 մլն դրամ: Սրանք, թերեւս, ԱՄՆ-ում աշխատած գումարներն են, որոնց ծագումը չգիտենք, քանի որ մեկ տարվա ընթացքում վարչական շրջանի ղեկավարի եկամուտը 6 մլն 266 հազար դրամ է կազմել, որից 1 մլն դրամը ստացել է ՊԵԿ-ից, իսկ մյուս մասն էլ նրա տարեկան աշխպատավարձն է: Հավելենք, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարը հաճախ է հայտնվում աղմկարահույց իրադարձությունների կենտրոնում: Օրինակ՝ 2022 թվականին Երեւանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին եւ տեղակալներին հենց աշխատասենյակում ծեծի էին ենթարկել: «Ժողովուրդ» օրաթերթը, իհարկե, փորձեց մեկնաբանություններ լսել Սամվել Ղուկասյանից, սակայն նրա հետ զրուցելու, հարցեր ուղղելու բոլոր ջանքերը միշտ պսակվում են անհաջողությամբ:

ԶՐՈՒՅՑ

ՇԱՐՄԱԶԱՆՈՎԸ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը նախորդ շաբաթ ԱԺ քննիչ հանձնաժողովում նոր մանրամասներ է ներկայացրել 44-օրյա պատերազմի հանգամանքների վերաբերյալ:

Նա հերթական անգամ մեղադրանքի սլաքներն ուղղեց նախկին իշխանությունների կողմը, որ իրեն բանակցային վատ ժառանգություն են թողել, անպիտան զենքեր են ձեռք բերել, բանակցությունները փակուղի են տարել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովն արձագանքել է Նիկոլ Փաշինյանի հայտարարություններին:

Մեզ հետ զրույցում նա անդրադարձել է նաեւ Արցախի հարցով բանակցային գործընթացին:

-Պարոն Շարմազանով, նախորդ շաբաթ Նիկոլ Փաշինյանը եկել էր Ազգային ժողով՝ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով, եւ պատասխանում էր հանձնաժողովի անդամներին: Նա հերթական անգամ մեղադրանքներ էր հնչեցնում նախկին իշխանությունների, նախկին նախագահների, այդ թվում՝ Սերժ Սարգսյանի հասցեին՝ ասելով, որ բանակցային վատ ժառանգություն են իրեն փոխանցել, պատերազմն անխուսափելի էր: Մասնավորապես, Սերժ Սարգսյանին մեղադրում էր նրան համար, որ ոչ պիտանի զենք են ձեռք բերել: Ինչպե՞ս կարձագանքեք այս հայտարարություններին:

-Նիկոլ Փաշինյանը եւ՛ հունիսի 25-ին, եւ՛ հունիսի 27-ին ներկայացավ այդ արհեստական քննիչ հանձնաժողովին, որտեղ իրենք իրենց՝ ՔՊ-ականներով հարցեր են տալիս ու պատասխանում: (դա նույնն է, եթե, օրինակ, Բերիան ինքն իր համար հանձնաժողով ստեղծեր, կամ Ալիեւը Սումգայիթի ջարդերի հանձնաժողով ստեղծի. ծիծաղելի է): Ինչ վերաբերում է նրա մեղադրանքներին, Նիկոլ Փաշինյանը կործանված, կապիտուլյացված, Ալիեւի առջեւ ծնկի եկած գործիչ է: Նա շատ է ցանկանում սրա-նրա մեղքը գցի, բայց մեկ բան նա չի հասկանում. 2018 թվականի մայիսի 8-ից առ այսօր ինքն է Հայաստանի Հանրապետության վարչապետը եւ հենց ինքն է լավ ու վատի տերը: Եթե ասֆալտով ու թոշակների բարձրացմամբ հպարտանում է, ապա թող իմանա, որ Շուշիի ու Հադրութի հանձնում էլ, 5000-ից ավելի զոհերն էլ, Հայաստանի տարածքի օկուպացիան, Գորիս-Կապան ճանապարհի 21 կմ-ի հանձնումը, տասնյակ գերիները եւս իր խղճին են: Նիկոլ Փաշինյանը չէ՞ր, որ ասում էր՝ ես բանակցությունները սկսելու եմ սեփական կետից: Դա նշանակում է մեկ բան. մինչեւ ինձ լավ է եղել, վատ է եղել, ես, միեւնույնն է, իմ կետից եմ սկսելու: Ինքը չի՞ ասել նման բան:

Ինքն է ասել: Նիկոլ Փաշինյանն է ասել, որ ինչ պետք է, այն էլ բանակցում եմ: Չի ասել, որ մինչ իրեն Սերժ Սարգսյանը, Ռոբերտ Քոչարյանը, Լեւոն Տեր-Պետրոսյանը ինչ են բանակցել, շարունակեմ կամ լրացնեմ նրանց: Նա ասել է՝ իր կետից է բանակցում: Նոր պատերազմ՝ նոր տարածքներ: Երբ հարցրին, թե ՊՆ նախարար Դավիթ Տոնոյանն ասել է արդյոք նման բան, պատասխանեց, որ եթե նա ուրիշ բան ասեր, աշխատանքից կհեռացնեի: Ինչպե՞ս ստացվեց, որ տավուշյան երկու դիրքը գրավելու մարշալն ու հերոսը Նիկոլն էր, Արցախն ու 5000 զոհ տալու մեղավորը Նիկոլը չէր: Իսկ եթե Սերժ Սարգսյանի հետ է ուզում համեմատվել, չի կարող. պարտվածը հաղթածի հետ համեմատվել չի կարող:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՐՑԱԽ

ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆ «ՀԱՅԱՔՎԵ»-Ն

Արցախի Հանրապետության ԱԺ «Ազատ Հայրենիք-ԲՄԴ», «Միասնական հայրենիք», «Արդարություն», «ՀՅ Դաշնակցություն» ու Արցախի ժողովրդավարական խմբակցությունները «ՀայաՔվե» օրենսդրական նախաձեռնության մասին հայտարարությամբ են հանդես եկել:

«Արցախի Հանրապետության Ազգային ժողովի բոլոր խմբակցությունները ողջունում են «Համախմբում» շարժման «ՀայաՔվե» օրենսդրական նախաձեռնությունը եւ մաղթում հաջողություններ:

Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության կացության շուրջ ստեղծված աննախադեպ իրավիճակում այդ օրենսդրական նախաձեռնությունը կոչված է կանխելու Արցախի ժողովրդի հավաքական կամքի դրսեւորման անբեկանելի իրողությունը շրջանցելու որեւէ նկրտում: Այն երաշխավորում է հայ մարդուն իր երկրի ճակատագրական հարցերի լուծմանն անմիջական մասնակից լինելու սկզբունքային խնդիրը:

Արցախի կարգավիճակը, ըստ այդմ էլ՝ արցախցիների անվտանգ ապրելու հիմնարար իրավունքի ապահովելը ՀՀ ներքին եւ արտաքին քաղաքականության առանցքային բաղադրիչը պետք է լինի: Լիահույս ենք, որ խելամիտ համակողմանի քայլերի արդյունքում «ՀայաՔվե»-ն նշված ուղղություններում կունենա առանցքային նշանակություն: Սա ժողովրդի իշխանության օրինակելի նախաձեռնություն է, քանզի «Ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին» արտահայտությունը ոչ թե մերկապարանոց լոզունգ է, այլ կիրառման ենթակա հզորագույն գործիք:

Արցախը չի ընկրկելու թշնամու առջեւ, թույլ չենք տալու մեր ազգային ազատագրական արդար պայքարը անամոթաբար «ահաբեկչություն» անվանել՝ իրավունքի հանրաճանաչ նորմերով ամրագրված մեր հիմնարար իրավունքների համար մղվող պայքարի ոգին:

Ելակետ ընդունելով այն, որ համազգային խնդիրները հարկ է լուծել բացառապես համազգային ընթացակարգերով, մեկ անգամ եւս պետք է արձանագրվի, որ Արցախի ժողովուրդն ազատ եւ անկախ ապրելու իր կամքն ամրագրել է 1991թ. ԼՂՀ-ի Հռչակագրով, 1991թ. հանրաքվեի արդյունքներով, 1992թ. ԼՂՀ-ի պետական անկախության մասին հռչակագրով: Արցախի ժողովրդի իրացված ինքնորոշման իրավունքի փաստի որեւէ խմբագրում հնարավոր է բացառապես ժողովրդական կամարտահայտությամբ, ուստի առանձին անձինք եւ շրջանակներ իրավասու եւ լիազորված չեն վճռահատելու համազգային առանցքային հարցերը:

Աստված պահապան մեր Հայրենիքին եւ մեր հայրենակիցներին»,- ասվում է հայտարարությունում:

«ԻՄ ՔԱՅԼ»-Ի ԹԵԿՆԱԾՈՒՆ ՄԱՆԴԱՏԸ ՓՈԽԱՆՑՈՒՄ Է

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հուլիսի 4-ին գումարեց հերթական նիստ: Հանձնաժողովը Արեւիկ Անդրանիկի Ավետիսյանին Երեւանի ավագանու անդամի մանդատ տրամադրելու արձանագրություն կազմեց: Նախագիծը զեկուցեց ԿԸՀ քարտուղար Արմեն Սմբատյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ Երեւանի ավագանու «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված եւ լիազորությունները վաղաժամկետ դադարած Անուշ Քլոյանի մանդատը տրվել է վերոնշյալ դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Արեւիկ Անդրանիկի Ավետիսյանին:

Հիշեցնենք, որ ԱԺ ՔՊ խմբակցության պտգամավոր Վիգեն Խաչատրյանի մահից հետո նրա մանդատը բաժին է հասել Անուշ Քլոյանին: Քլոյանի վերաբերյալ ԿԸՀ-ն որոշում է կայացրել հունիսի 27-ին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԲՈՐԴԱԿԱՆ ԵՆ ՀԱՄԱԲՈՒՄ

Հայաստանի քաղաքական դաշտը պատրաստվում է Երեւանի ավագանու առաջիկա ընտրություններին: Քաղաքական մի շարք ուժեր արդեն պաշտոնապես հայտարարել են, որ մասնակցելու են ավագանու ընտրություններին, թեկնածուների մասին են անգամ հայտարարել: Չնայած իշխող քաղաքական ուժը կենաց-մահու կռիվ է տալիս Երեւանում իշխանությունը պահելու համար, ընդդիմադիր հիմնական ուժերը պասիվ են այս առումով. տպավորություն է՝ նրանց համար մեկ են ավագանու ընտրությունները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը թեեւ դեռ վերջնական որոշում չունի, բայց, ինչպես մեր աղբյուրները հայտնեցին, մեծամասնությունը հակված է ավագանու ընտրություններին չմասնակցելուն. ասում են՝ ՀՀԿ-ում երկրորդական են համարում այդ հարցը, անգամ առանձին քննարկում էլ չեն հասցրել անել ընտրություններին մասնակցելու մասով: Կուսակցությունում ներքին քննարկումներ կան, որ եթե ընդդիմադիր ուժերին չի հաջողվում միավորվել ու քաղաքականացնել ընտրությունները, ապա անիմաստ է դրանց մասնակցելը, առավել եւս որ Հայաստանի եւ Արցախի շուրջ լրջագույն անվտանգային մարտահրավերներ կան ծառացած: ՀՀԿ կազմակերպչական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Թադեւոսյանը մեզ հետ զրույցում ասաց, որ դեռ այդ հարցը չեն քննարկել, քանի որ ավելի կարեւոր հարցեր կան օրակարգում անվտանգային ու Արցախի մասով: «Դեռ չենք էլ քննարկել այդ հարցը, վերջնական որոշում չունենք. հենց լինի, կհայտարարենք»,-ասաց նա:

ՄԱՄԻՋԱՆՅԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

«Սրանք փորձում են ընդդիմադիրներին իրենց արշինով չափել, մտածում են, որ իրենց բանտարկություններից, շինծու քրեական գործերից վախեցող կա»,- հուլիսի 4-ին՝ ՀՀԿ-ականների բողոքի ակցիայի ժամանակ, լրագրողների հետ զրույցում նշեց ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը:

Նա դիմեց ներկաներին հարցով. «Այստեղ բանտարկվելուց վախեցող մարդ կա՞»: Ստացավ ժխտական պատասխան:

Մամիջանյանն այնուհետեւ դիմեց իշխանություններին ու Նիկոլ Փաշինյանին. «Դու լավ չես հասկացել՝ ում հետ գործ ունես: Արմեն Աշոտյանը, մեր մյուս ընկերները, որոնք արդեն տարիներ շարունակ ազատության մեջ են, ո՛չ քեզնից, ո՛չ քո կատարածուներից չեն վախենում, որովհետեւ մենք ավելի թանկ բան ենք կորցրել ու կորցնում: Մեզ համար ազատ կյանքն առանց Արցախի արժեք չունի՝ ի տարբերություն քեզ: Մտածի՝ եթե քեզ բանտարկելուց լինեն, գոնե մի հոգի կգա՞:

Դիմում եմ նաեւ այն պաշտոնյաներին, որոնք հույս ունեն, որ Փաշինյանի ասածները կատարելով՝ իրենց անվտանգությունն են գնում: Սխալվում եք. ինքը աշխարհում պաշտպանում է միայն իր կաշին ու իր աթոռը: Բոլորիդ, անխտիր բոլորիդ ծախելու է: Էն մարդիկ, որոնք մտածում են՝ իր ասածները անեմ, հանգիստ կապրեմ՝ չես ապրի: Բոլորիդ է ծախելու՝ երեսփոխանից մինչեւ շինծու քրեական գործ կարող քննիչ:

Ու մեկ էլ. ինչպես Ալիեւին Ղարաբաղը պետք է առանց հայերի, Փաշինյանին Հայաստանը պետք է առանց հայրենասերների, ու դա չի ստացվելու: Փորձես բանտարկել, սպանել, ինչպես սպանեցիր Արմեն Գրիգորյանին, չի ստացվելու, չես կարող բոլոր հայրենասերներին սարքես քաղբանտարկյալ»,- ընդգծեց Մամիջանյանը:

Նրա խոսքից հետո ներկաները սկսեցին վանկարկել՝ ազատություն:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՌԴ-Ի ՀԵՌԱՑՄԱՄԲ

Վաշինգտոնյան բանակցություններն իրականում ընթանում են ոչ թե Արցախի հարցի, այլ Հայաստանի կարգավիճակը որոշելու համար: Այս մասին ասում է քաղաքագետ Բենիամին Մաթեւոսյանը:

«Բանակցություններում Ադրբեջանը պնդում է, որ դեմարկացիայի եւ դելիմիտացիայի գործընթացը լինի իրենց ցանկացած քարտեզներով, բանակցեն Արցախի հետ ուղղահայաց կերպով: Վաշինգտոնյան բանակցությունները իրականում ոչ թե Արցախի մասին են, այլ Հայաստանի կարգավիճակի՝ ինչ կարգավիճակ է ունենալու Հայաստանը Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքի շրջանակում, կարգավիճակ, որը որեւէ անվտանգային երաշխիք չունի: Բայց քանի որ հանրային ընկալման մեջ կա Արցախի հարցը, ներառվում են դրույթներ այդ մասին»,- ասաց Մաթեւոսյանը:

Քաղաքագետին չի զարմացրել ԱՄՆ դեսպանի հայտարարությունը, որ արցախցիները կարող են ապրել Ադրբեջանի կազմում: Նրա խոսքով՝ Նիկոլ Փաշինյանն Արցախն Ադրբեջանի կազմում է ճանաչել դեռ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում, իսկ ԱՄՆ դեսպանն ուղղակի ասել էր ակնհայտը:

«Եթե մի քիչ էլ բացենք հայտարարությունը, արցախցիների համար լավագույն երաշխիքը կլինի ենթարկվելն Ադրբեջանի Սահմանադրությանը: Արցախի համար անվտանգությունն ապահովող միջազգային երաշխիք չկա, ԱՄՆ-ն նման բանի մասին երբեւէ չի խոսել, դա մեծագույն խաբեություն է: Նիկոլ Փաշինյանը հավանություն է տվել մի ծրագրի, որով Արցախը կլինի Ադրբեջանի կազմում՝ առանց որեւէ կարգավիճակի, եւ անվտանգության երաշպավորն էլ պետք է լինի Ադրբեջանի Սահմանադրությունը: Պետք է շնորհակալություն հայտնի ԱՄՆ դեսպանին անկեղծության համար»,- նշեց Մաթեւոսյանը:

Բենիամին Մաթեւոսյանի կարծիքով՝ Ստեփանակերտի եւ Բաքվի միջեւ բանակցություններն անհրաժեշտություն են, սակայն ոչ այն մոդելով, որի շուրջ այսօր բանակցում է Հայաստանը: Բանակցությունները պետք է լինեն հավասարը հավասարի տեսքով, ոչ թե ուղղահայաց:

«Բաքուն, որպես կենտրոն, Արցախի ներկայացուցիչների հետ խոսելու է տարածքային ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ: Այս մոդելն ուղղակի տանում է ցեղասպանության: Ամերիկյան կողմի հետ մենք ընդհանրապես չպետք է հարցեր ունենանք, իրենք հետապնդում են իրենց շահերը՝ հեռացնել Ռուսաստանին ազդեցության բոլոր գոտիներից, եւ եթե դրա գինը հայի ցեղասպանությունն է, իրենք այդ գինը պատրաստ են վճարել: Իրենք համատեղ Հայաստանի իշխանության հետ իրականացնում են ծրագիրը, բայց եթե ԱՄՆ-ի շահը հասկանալի է, ապա ո՞րն է Հայաստանի շահը: Իսկ Հայաստանի Հանրապետությունը որեւէ միջաազգային երաշխիք ստանո՞ւմ է. իրենք որ դրդում են Հայաստանին Ադրբեջանի հետ ռազմավարական դաշինքի, անվտանգային երաշխիք տալի՞ս են՝ ոչ. դա իրենց խնդիրը չէ, մերն է»,- ընդգծեց Մաթեւոսյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՀՀ վարչապետի որոշմամբ՝ Դավիթ Կարապետյանը նշանակվել է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով եւ «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Դավիթ Կարապետյանին նշանակել սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ»,- ասված է որոշման մեջ:

ԵՐԹՈՒՂԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

Երեւան-Բաթումի-Երեւան միջազգային գնացքի երթուղին վերականգնվել է: Չնայած նրան, որ վրացական երկաթուղու վնասված հատվածով երթեւեկությունը վերականգնվել է սահմանափակ ռեժիմով, վրացական կողմը համաձայնեցրել է միջազգային գնացքի երթեւեկը Երեւանից մինչեւ Բաթումի:

Հիշեցնենք, որ երթուղին խաթարվել էր հուլիսի 2-ին սողանքի հետեւանքով:

Մեր տեղեկություններով՝ առաջիկա օրերին միջազգային գնացքների չվացուցակը փոփոխություն չի կրի, սակայն քննարկվում է ապագայում դրա վերանայման հարցը:

«Հարավկովկասյան երկաթուղիներ» ընկերությունը հայցում է ուղեւորների ներողամտությունը եւ հիշեցնում, որ տվյալ իրավիճակը պայմանավորված է վերջին ամիսներին Հայաստանում ու Վրաստանում առկա եղանակային բարդ պայմաններով: Վերջերս սողանքային իրավիճակ էր առաջացել նաեւ Հայաստանի հյուսիսում, երբ սելավը հունիսի 6-7-ն վնասել էր երկաթուղին Ալավերդու մոտակայքում:

ԿՍՊԱՍԱՐԿՎԵՆ ՆԱԵՎ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԻՆ

Հաշվի առնելով վերջին շրջանում քաղաքացիների մեծ հոսքն ու հերթերի ծավալների աճը՝ ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության տարածքային անձնագրային ստորաբաժանումներում աշխատանքները պատշաճ կազմակերպելու եւ դիմողներին որակյալ ծառայություններ մատուցելու նպատակով որոշվել է հուլիսի 8-ից աշխատանքային հայտարարել նաեւ շաբաթ օրերը:

Քաղաքացիները կսպասարկվեն սովորական աշխատանքային ռեժիմով:

Սպասարկման ընթացքում առաջացող խնդիրների առնչությամբ քաղաքացիները կարող են կապ հաստատել ՄՔԾ թեժ գծով՝ 010 370264, կամ զանգահարել 1-02: Արդեն իսկ էլեկտրոնային հերթագրման կարգ է գործում Քանաքեռ-Զեյթունի, Արաբկիրի եւ Մաշտոցի անձնագրային բաժանմունքներում, իսկ հուլիսի 10-ից էլեկտրոնային հերթագրում կիրականացվի նաեւ Կենտրոնականի, Նոր Նորքի, Մալաթիա-Սեբաստիայի եւ Շենգավիթի անձնագրային ծառայություններում: Հերթագրվել կարելի է migration.e-gov.am կայքի միջոցով:

Հաջորդիվ էլեկտրոնային հերթագրման կարգն աստիճանաբար կներդրվի նաեւ Երեւանի մնացած անձնագրային ծառայություններում, այնուհետեւ՝ նաեւ մարզերում՝ ծանրաբեռնվածությունից ելնելով:

ՊԱՅԹՅՈՒՆ

ԴԱՎԱԴԻՐ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ArmLur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել Փարաքարում 36-ամյա տղամարդու մեքենան պայթացնելու միջոցով նրան սպանելու դեպքից:

2022 թվականի հունիսի 23-ին Փարաքար գյուղի Գետափի փողոցում մեքենայի պայթյունի հետեւանքով վնասվածքներ էր ստացել Փարաքարի 36-ամյա բնակիչ Վարազդատ Բարոյանը, որը մահացել էր: Պարզվել է, որ նրա մեքենայի մեջ ռումբ են տեղադրել եւ սպանել են: Գործով պարզվել է, թե ինչպես են նախապատրաստել նրա սպանությունը: Արթուր Ասատրյանը մեղադրվում է հետեւյալ հանրորեն վտանգավոր արարքները կատարելու համար. նա, Յուրիկ Գրիգորյանի եւ վարույթով դեռեւս չպարզված մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, Վարազդատ Բարոյանին սպանելու նպատակով ապօրինի կերպով ձեռք են բերել շուրջ 100 գրամ տրոտիլ տեսակի պայթուցիկ նյութ պարունակող անկաղապարավոր լիցքով ինքնաշեն պայթեցման սարք, որը պահել, իսկ 2022թ. հունիսի 23-ին՝ ժամը 4:00-ի սահմաններում, փոխադրել են Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Գետափի փողոց, ապա այն տեղադրել Վարազդատ Բարոյանի՝ «ՎԱԶ 21214» մակնիշի, 35PM099 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առջեւի ձախ նստատեղի հատվածի տակ՝ ձախ լանժերոնի հետեւի հատվածում, եւ այն էլեկտրադետոնատորի կիրառմամբ հեռակառավարման եղանակով գործադրելով՝ պայթյունի միջոցով, այլ անձանց /շատերի/ կյանքի համար վտանգավոր եղանակով կատարել են Վարազդատ Բարոյանի սպանությունը, նրան ապօրինաբար, դիտավորությամբ զրկել են կյանքից: Նորագավիթցի Ծուռ մականվամբ Արթուր Ասատրյանը, Թոխմախցի Յուրո մականվամբ Յուրիկ Գրիգորյանը եւ վարույթով դեռեւս չպարզված մի խումբ անձինք նախնական համաձայնություն են ձեռք բերել Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բնակիչ Վարազդատ Բարոյանի սպանության շուրջ, որն իրագործելու նպատակով Արթուր Ասատրյանը եւ Յուրիկ Գրիգորյանը, ինքնությունը դեռեւս չպարզված մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, քրեական վարույթով դեռեւս չպարզված ժամանակահատվածում եւ հանգամանքներում ապօրինի կերպով ձեռք են բերել եւ պահել ինքնաշեն պայթուցիկ (պայթեցման) սարք: Վարազդատ Բարոյանի սպանությունն իրականացնելուն օժանդակելու համար Արման Բուղդարյանը եւ Արսեն Հայրապետյանը քննությամբ դեռեւս չպարզված ժամանակահատվածում ձեռք են բերել համացանցային հեռավար հասանելիություն ապահովող «Beeline» ապրանքանիշի, «SM25» մոդելի «Անլար» երթուղիչ՝ «Wi Fi» սարք, «A9 WiFi mini DV» մոդելի, անլար եղանակով («WiFi» տեխնոլոգիայով), առցանց կամ իրական ռեժիմում տեսագրություններ են կատարել: Այնուհետեւ Արսեն Հայրապետյանը Վարազդատ Բարոյանի տեղաշարժը հեռավար տեսահսկելու եւ անհրաժեշտ պահին հանցավոր խմբի մյուս անդամների կողմից նրա սպանությունն իրագործելու նպատակով, «Wi Fi» սարքը նշված տեսախցիկին եւ երկու արտաքին մարտկոցներին միացնելով, պատրաստել է հեռավար տեսահսկման սարք, որը 2022թ. հունիսի 8-ին Արման Բուղդարյանը տեղափոխել է հանցավոր խմբի հավաքատեղի հանդիսացող «Հրաշք Այգի» ռեստորանահյուրանոցային համալիրի տարածք եւ փոխանցել Արթուր Ասատրյանին, Յուրիկ Գրիգորյանին, Հարություն Ավետիսյանին, Լեւոն Բաբայանին եւ մյուս հանցակիցներին: Պայթեցման սարքը եւ տեսախցիկը նշված վայրում տեղադրելուց հետո՝ մինչեւ 2022թ. հունիսի 23-ի ժամը 11:05-ն ընկած ժամանակահատվածը, հանցավոր խմբի անդամներն ինտերնետային կապի տարբեր միջոցներով, այդ թվում՝ խմբի անդամների կողմից օգտագործվող 041-69-10-17 եւ 041-69-10-13 բջջային հեռախոսահամարներով, Արման Բուղդարյանի կողմից ձեռք բերված եւ խմբին փոխանցված վերը նշված բջջային հեռախոսներով հասանելիություն են ստացել Վարազդատ Բարոյանի տան մոտակայքում տեղադրված հեռավար տեսահսկման սարքին ու այդկերպ հսկել են Վարազդատ Բարոյանի տան մուտքի հատվածը, որպեսզի նրա կողմից մուտքից դուրս գալու եւ տան դիմաց կայանված ավտոմեքենան նստելուց հետո հեռակառավարման միջոցով հարմար պահին պայթեցման եղանակով իրականացնեն իրենց հանցավոր մտադրությունը: 2022թ. հունիսի 23-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, Վարազդատ Բարոյանը դուրս է եկել իր տնից, նստել է վերը նշված իր ավտոմեքենան եւ ուղեւորվել դեպի Նաիրի փողոց: Շուրջ 100 մետր ընթանալուց հետո՝ Գետափի փողոցի 15 հասցեում գտնվող տան մոտ, հանցավոր խմբի անդամները Վարազդատ Բարոյանին ապօրինաբար կյանքից զրկելու նպատակով հեռակառավարման միջոցով գործարկել են նույն ավտոմեքենայի վրա տեղադրված պայթեցման սարքը, որի պայթյունի հետեւանքով առաջացած հարվածային ալիքից՝ բեկորների եւ բարձր ջերմային գործոնի տեղային ներգործությունների հետեւանքով Վարազդատ Բարոյանը ստացել է գլխի, մարմնի, վերին եւ ստորին վերջույթների համակցված, կյանքի հետ անհամատեղելի՝ առողջության ծանր վնասի հատկանիշներ պարունակող, մահվան հետ անմիջական պատճառական կապի մեջ գտնվող պայթյունաբեկորային վնասվածքներ եւ ջերմային այրվածքներ, շտապ բուժօգնության ավտոմեքենայով տեղափոխվել է Երեւան քաղաքի «Աստղիկ» բժշկական կենտրոն, որտեղ նույն օրը՝ ժամը 12.05-ին, մահացել է: Պայթյունի հետեւանքով Վարազդատ Բարոյանի «ՎԱԶ 2121» մակնիշի, 35 PN 099 հաշվառման համարանիշի ավտոմեքենան ենթակա չէ վերանորոգման, իսկ վերջինիս պայթեցման, այրման եւ ջերմահարման հետեւանքով պատճառված նյութական վնասի չափը 2022 թվականի հունիսի 23-ի դրությամբ կազմել է շուրջ 2379000 /երկու միլիոն երեք հարյուր յոթանասունինը հազար/ ՀՀ դրամ: Այս արարքի համար մեղադրյալի աթոռին են հայտնվել 5 անձ, որոնք կալանավորված են:

ՈՐ ԷՐ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՀԱՑԱԾԸ

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ Հայաստանի ճնշչական կոմիտեի Արարատի մարզային ճնշչական վարչության Մասիսի ճնշչական բաժնում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում ղեկավարվել է հունիսի 29-ին Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 18 կմ հատվածում Մարմարաշեն գյուղի վարչական տարածքում գործող գազալցակայանում գտնվող «DAF H4EN3» բեռնատարի կցորդիչի վրա առկա հեղուկ գազի ցիստեռնից հողի մեջ տեղադրված հեղուկ գազի ցիստեռնը լիցքավորելու ընթացքում առաջացած դեպքի հետեւանքով հիվանդանոցում մահացածի ինքնությունը: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայրում մահացածը Մասիս քաղաքի բնակիչ 32-ամյա Անդրանիկ Մնացականյանն էր, որն աշխատում էր LPG լցակայանում որպես հերթապահի պետ:

Ինչպես ավելի վաղ դեպքի վայրից հայտնել էր ֆոտոլրագրողը, հունիսի 29-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 19:40-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարարծառայության 911 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Երեւան-Մեղրի ավտոճանապարհի Մարմարաշեն գյուղի վարչական տարածքում գործող ավտոգազալցակայանում պայթյուն է տեղի ունեցել, եւ կա տուժած: Դեպքի վայր է ժամանել Մասիսի հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ դեռեւս անհայտ հանգամանքներում գազալցակայանի տարածքում՝ հողի մեջ տեղադրված 3 ցիստեռները հեղուկ գազով լիցքավորելու ժամանակ պայթյուն է առաջացել, եւ փլուզում է տեղի ունեցել, ինչի հետեւանքով գազալցակայանի աշխատակիցը մարմնական վնասվածքներ է ստացել, եւ օպերատիվորեն ժամանած շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը նախ տեղում առաջին բուժօգնությունն է ցուցաբերել վիրավորին, ապա տեղափոխել Երեւանի հիվանդանոցներից մեկը: Դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արարատի մարզային վարչության պետ Սարիբեկ Ռուստամյանը, վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ Արմեն Նավասարդյանը, ոստիկանության Արտաշատի բաժնի պետ Գոռ Մանուկյանը: Տեղում, սակայն, պարզվել է, որ տարածքը սպասարկվում է ոստիկանության Մասիսի բաժնի կողմից, ինչի համար էլ, մարզի ոստիկանապետ Ս. Ռուստամյանի հանձնարարականով, դեպքի վայր է ժամանել ոստիկանության Մասիսի բաժնի խումբը՝ բաժնի պետ Ասքանազ Դավթյանի գլխավորությամբ: Ոստիկանությունն ու քննչական վարչությունը պարզում են վիրավորի եւ գազալցակայանի սեփականատիրոջ ինքնությունը: Մինչ դեպքի վայրում աշխատում էր քննչական խումբը՝ Մասիսի քննչական բաժնի պետի տեղակալ Արթուր Բաբայանի եւ հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչներ Արտակ Բադալյանի եւ Ռոման Սմոյանի գլխավորությամբ, հիվանդանոցից ահազանգ է ստացվում ոստիկանության Մասիսի բաժին, որ վիրավորը վերակենդանացման բաժանմունքում, գիտակցության չգալով, մահացել է: Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝դատարանի՝օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի հունիսի 27-ին վարույթ է ընդունել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Գլխավոր դատախազության տարածած հաղորդագրությունից, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության թիվ 6 բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի նախկին նախագահ Ժ.Հ.-ից եւ նրա հետ փոխկապակցված մեկ անձից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել

Երեւան քաղաքում գտնվող մեկ անշարժ գույք, իսկ անհնարինության դեպքում՝ դրա միջին շուկայական արժեքը, որը կազմում է 38 մլն 800 հազար դրամ,

80 հազար ԱՄՆ դոլարի չափով ներդրված ավանդներ, ինչպես նաեւ 130 մլն 875 հազար 843 դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդ,

4 մլն 287հազար 647 դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում եւ ենթակա է բռնագանձման՝ հիմք ընդունելով օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը:

ՈՐՈՇՈՒՄ՝ ՆԱԽԿԻՆ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ԳՈՐԾՈՎ

Երեկ Վլադիմիր Գասպարյանի փաստաբան Ալեքսանդր Կոչուբաեւը հայտնեց, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն նախկին ոստիկանապետի գործով հայտարարեց նախաքննության ավարտ եւ երկու դրվագներով նոր մեղադրանքներ ուղարկեց դատարան:

«Պաշտպանական կողմը գտնում է, որ մեղադրանքներն ամբողջությամբ անհիմն են եւ մեկ մարդու երեւակայության արդյունքում կազմված զեկուցագրի հետեւանք: Մենք այս քրեական հետապնդումը չենք դիտարկում քաղաքական կոնտեքստում, քանի որ առկա է եղել օրենքով նախատեսված զեկուցագիր, որի հիման վրա իրականացվում են իրավական գործընթացներ: Մենք վստահ ենք՝Վլադիմիր Գասպարյանն արդարացվելու է, իսկ զեկուցագիրը ներկայացրած անձը ենթարկվելու է քրեական պատասխանատվության սուտ մատնություն կատարելու համար: Մենք խախտում ենք հայտարարված լռությունը, քանի որ այն ստեղծել է սխալ ընկալումներ հանրության շրջանում»,- նշել է նա:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 30-ից հուլիսի 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 145 դեպք, որից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏԱՎՈՒՇԻՑ ՍԻԲԻՐ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԵՏԵՎԻՑ

Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ հունիսի 27-ին Կրասնոյարսկի երկրամասում մեկնարկել է «Бирюса 2023» համառուսաստանյան երիտասարդական ֆորումի երկրորդ հերթափոխը՝ «Մենք հասնում ենք հաղթանակների» խորագրով, որը կշարունակվել է մինչեւ մինչեւ հուլիսի 3-ը: Ֆորումին մասնակցել են նաեւ Տավուշի մարզից 4 երիտասարդներ: Սահմանամերձ Տավուշի մարզից 4 երիտասարդներ, հայտնի չէ, թե ինչ հաղթանակների համար հասել են հեռավոր Սիբիր՝ Կրասնոյարսկի երկրամաս:

ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵՐՈՒՄ ԵՆ

Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհին՝ Դիլիջան քաղաքի ոլորաններում՝ Դիլիջանի ազգային պարկի տարածքում, դարավանդը ավերել, մեծ տարածք են քերել, հերթական սննդի օբյեկտը ստեղծել: Հատուկ պահպանվող տարածքում՝ ազգային պարկում, բոլորի աչքի առաջ կատարվել է մեծ անօրինականություն, սակայն պատկան պետական մարմիններն աչք են փակել այդ ապօրինության վրա: Իջեւան քաղաքից վերեւ՝ հայտնի «Զրչռի» մոտ բազում տրակտորներ ավերել են Աղստեւ գետի հունը, գետից մեծ քանակի քար եւ ավազ են հանում: Նրանց տրված պետական բնապահպանական արտոնագրի մեջ գրված է, թե գետից հանվողը «վերականգնվող» ռեսուրս է, սակայն դա իրականության հետ կապ չունի: Իջեւանի դենդրոպարկի երկարամյա տնօրեն, այդ բուսաբանական այգին 1989 թվականից ղեկավարող Մեխակ Սայադյանը եւ դենդրոպարկի 3 աշխատակիցները ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լեւոն Տեր-Սիմոնյանից ծանուցագրեր են ստացել, որ 2023թ. օգոստոսի 20-ից հաստիքների կրճատման պատճառով Իջեւանի դենդրոպարկը լուծարվելու է: Դենդրոպարկի 4 աշխատողների ամսական ընդհանուր աշխատավարձի չափը 500 հազար դրամից պակաս է, այսինքն՝ Հայաստանի խորհրդարանի պատգամավորի ռոճիկի կեսից պակաս: Իջեւանի դենդրոպարկի տնօրեն Մեխակ Սայադյանը եւ Իջեւանի դենդրոպարկի մյուս 3 աշխատողները դիմում-բողոք են ուղարկել ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին, որով խնդրել են չեղարկել դենդրոպարկը լուծարելու վերաբերյալ Լեւոն Տեր-Սիմոնյանի ծանուցումները, այլապես իրենք կդիմեն դատարան: Նրանք հայտնել են, որ 2023 թվականի փետրվարին դենդրոպարկի տարածքից հանգստի գործի ստեղծելու համար Իջեւանի գինու, կոնյակի գործարանին վարձակալությամբ տրված 5,7 հեկտար տարածքում առկա են մատղաշ եւ հասուն տնկիներ, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 50 միլիոն դրամ: Դենդրոպարկի տարածքում գոյություն ունեն շենքեր, պահակատուն, պահեստներ ցանկապատ, ճանապարհներ, հիմնական եւ շրջանառու միջոցներ. իրենց աշխատանքից ազատելու դեպքում առանց պահպանության մնացած տնկիները, գույքը, նյութական միջոցները կարող են վնասվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՅՑ

ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պաշտոնական այցով Լեհաստանի Հանրապետությունում գտնվող ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը հուլիսի 4-ին հանդիպել է Լեհաստանի Սեյմի մարշալեկ Էլժբիետա Վիտեկին:

Ողջույնների փոխանակումից հետո կողմերը փաստել են, որ պաշտոնական այցի ընթացքում նախատեսվող հանդիպումներն ու քննարկումներն իրենց ներդրումը կունենան երկկողմ համագործակցության խթանման հարցում:

ԱԺ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ Ալեն Սիմոնյանը նշել է, որ մեր ժողովուրդներին կապում են հարյուրամյակների պատմական առնչությունները՝ հիշեցնելով, որ անցյալ տարի լրացավ Լեհաստանի հայ համայնքի կազմավորման 655-ամյակը:

Հանդիպմանն ընդգծվել է միջխորհրդարանական համագործակցության, այդ թվում՝ բարեկամական խմբերի կարեւորությունը երկկողմ հարաբերությունների ընդլայնման հարցում:

Շեշտելով միջազգային տարբեր հարթակներում փոխգործակցության հնարավորությունները՝ Ալեն Սիմոնյանը նշել է, որ որպես Արեւելյան գործընկերության համահեղինակ՝ Լեհաստանն ակտիվ դերակատարում ունի Հայաստան-ԵՄ հարաբերությունների ամրապնդման գործում, եւ Հայաստանն ակնկալում է Լեհաստանի աջակցությունը Համաձայնագրի արդյունավետ կիրարկման գործում:

Անդրադառնալով տարածաշրջանում կայունության հաստատմանն ու անվտանգային հարցերին՝ ՀՀ ԱԺ նախագահը մանրամասներ է ներկայացրել ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով Հայաստանի սահմաններին եւ Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակից: ՀՀ ԱԺ նախագահը հիշեցրել է, որ 2022 թվականի դեկտեմբերի 12-ից ի վեր Ադրբեջանը շրջափակել է Լեռնային Ղարաբաղը՝ կոպտորեն խախտելով միջազգային մարդասիրական իրավունքը եւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը, անտեսում է նաեւ փետրվարի 22-ին Արդարադատության միջազգային դատարանի՝ Ադրբեջանի դեմ իրավաբանորեն պարտավորեցնող որոշումը: Նա անչափ կարեւորել է Եվրամիության դիտորդական առաքելության տեղակայումը, ինչը բարենպաստ է անվտանգության, տարածաշրջանում կայունության ապահովման եւ տեղում վստահության ձեւավորման առումով: «Տեղյակ ենք նաեւ, որ այս տարվա կեսին Լեհաստանը նախատեսում է առաքելություն դիտորդների ներգրավվածության ընդլայնում, ինչը մեզ համար մեծապես ողջունելի է»,- ընդգծել է ԱԺ նախագահը: Ալեն Սիմոնյանը նշել է, որ միջազգային բոլոր գործընկերների հետ տարբեր հանդիպումների ընթացքում բարձրաձայնում են Ադրբեջանի դեմ պատժամիջոցների կիրառման անհրաժեշտության մասին եւ ակնկալում հասցեական արձագանքներ:

Լեհ գործընկերը շեշտել է, որ խորհրդարանական դիվանագիտությունն ապահովում է խորհրդարանների միջեւ չընդհատվող կապը, ինչի շնորհիվ երկրների վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ են ստացվում: ՀՀ ԱԺ նախագահը հույս է հայտնել, որ մեր երկրի ժողովրդավարության զարգացման եւ խաղաղության հաստատման հարցում եւս լսելի կլինի Լեհաստանի ձայնը:

Հանդիպումից հետո պատվիրակության անդամները շրջել են խորհրդարանի շենքում:

ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

ԱՀԱՋԱՆԳ՝ ՍԱՐԻ ԹԱՂԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթը բազմաթիվ ահազանգեր է ստանում Երեւանի Սարի թաղի բնակիչներից: Բանն այն է, որ արդեն տեւական ժամանակ է, ինչ պարբերաբար անջատում են էլեկտրաէներգիան առանց նախապես բնակիչներին զգուշացնելու:

Բնակիչների խոսքով՝ 15-20 օր է, ինչ անհասկանալի պատճառով գրեթե ամեն օր անջատում են էլեկտրաէներգիան. «Բազմիցս փորձել ենք հետաքրքրվել, փորձել ենք հասկանալ, թե ինչն է խնդիրը, ինչու են անջատում, ինչու նախապես չեն տեղեկացնում, բայց ոչ մեկ չի պատասխանում»:

Սարի թաղի բնակիչների ահազանգերի հետքերով «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերություն՝ պարզելու համար, թե ինչ է իրականում կատարվել:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության մամուլի քարտուղար Նատալյա Սարջանյանն ասաց, որ այդ թաղամասում մեկ վթարային անջատում է տեղի ունեցել. «Վթարային անջատումը տեղի ունեցել մոտ 10 օր առաջ, այլ անջատումներ չեն եղել»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

2023 թվականի ընթացքում շուրջ 1652 շահառու ստացել է աջակցություն երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերի շրջանակում. ընդհանուր առմամբ վճարվել է շուրջ 1 մլրդ 225 մլն դրամ: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

Հիշեցնենք, որ երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերն ուղղված են հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերող (բերած) կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիփոթեքային վարկ ստացած շահառուներին:

Առաջին ծրագրով միանվագ դրամական աջակցություն է տրվում մարզային բնակավայրերում հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով:

Երկրորդ ծրագրի շրջանակում հիփոթեքով բնակարան ձեռք բերող շահառուին տրամադրվում է դրամական աջակցություն՝ կանխավճարի ապահովագրության տարեկան ապահովագրական վճարի իրականացման համար:

Երրորդ ծրագրով՝ հիփոթեքային վարկ մարող ընտանիքում երեխա ծնվելու դեպքում ընտանիքին տրվում է միանվագ դրամական աջակցություն:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 16 ճՏՊ. 26 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՏՎՅԱԼՆԵՐ

ԱՂՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ՈՉԻՆՉ ՉՈՒՆԻ՞

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աղվան Վարդանյանը 2022 թվականի հայտարարատու տարվա հայտարարագրում որեւէ անշարժ գույք չի հայտարարագրել, այնինչ 2022 թվականի ընթացքում ձեռք է բերել 2021 թվականի արտադրության Toyota մակնիշի մեքենա 14 միլիոն դրամով:

Տվյալ տարվա վերջում առկա չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող մեկ գույք է հայտարարագրել Վարդանյանը, որը գեղանկար է եւ նվիրատվություն, եւ արժեքը նշված չէ:

Նախկին ՀՅԴ խմբակցության ղեկավարի բանկային հաշիվների մնացորդները կազմում են 1 մլն 862 հազար դրամ եւ 5 հազար 454 դոլար, իսկ կանխիկ դրամական միջոցները 10 հազար դոլար եւ 65 մլն դրամ: Պատգամավորի տարեկան եկամուտները կազմել են 6 մլն 621 հազար դրամ, որից 6 մլն 021 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Ազգային Ժողովի աշխատակազմից, իսկ 600 հազար դրամը՝ կեսաթոշակ ID Bank-ից:

Պատերազմից հետո ՔՊ-ականների անկումը կանխատեսող պատգամավորի կինը՝ Ցողիկ Բեժանյանը, տարեսկզբին հայտարարագրել է միանձնյա հողամաս Տավուշի մարզում, որը տարվա ընթացքում օտարվել է 6 մլն դրամով: Կնոջ բանկային ավանդները տարեվերջին կազմել են 7 մլն 400 հազար, իսկ բանկային հաշիվների մնացորդները կազմել են 150 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 5 մլն դրամ: Բեժանյանի տարեկան եկամուտները կազմել են 7 մլն 085 հազար դրամ:

Նշենք նաեւ, որ Աղվան Վարդանյանի հետ համատեղ բնակվող որդին՝ Վահե Աղվանի Վարդանյանը, եւ Վարդուհի Լեւոնի Վարդանյանը հայտարարագիր չեն ներկայացրել:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՈՒ ԿՆՈՋ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր, ՀՀ նախկին նախագահներ Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի իշխանավարման տարիներին տարբեր բարձր պետական պաշտոններ զբաղեցրած Արմեն Գեւորգյանը հայտարարագրել է 9 անշարժ գույք, որից երկուսը հողամաս է, որոնք գտնվում են Կոտայքի մարզի Քարաշամբ գյուղում, մյուս 7 գույքի տվյալները պաշտպանված են:

Նա չի հայտարարգրել որեւէ տրանսպորտային միջոց, սակայն հայտարագրել է LEXUS մակնիշի մեքենա, որը փաստացի պատկանում է կնոջը, բայց շահագործվում է նաեւ պատգամավորի կողմից. այն, ի դեպ, կինը նվիրատվություն է ստացել:

Գեւորգյանի բանկային հաշիվների մնացորդները ընդհանուր առմամբ կազմել են 12 մլն 495 հազար դրամ եւ 3 հազար 343 դոլար: Սրանք այն տվյալներն են, որոնք բաց եւ թափանցիկ ներկայացված են, մյուս տվյալների դեպքում գումարի ստացման աղբյուրը, նախորդ տարվա տվյալները պաշտպանված են: Իշխանականների հետ մշտապես գործուղումների մեջ գտնվող պատգամավորի կանխիկ դրամական միջոցները հայտարարատու տարում կազմել են 1 մլն 250 հազար դրամ, 2,750 դոլար եւ 850 եվրո:

Ընդհանուր առմամբ, Գեւորգյանի հաշվետու տարվա եկամուտը կազմել է 10 մլն 642 հազար դրամ, որից 6 մլն 836 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմից: Ֆինանսական 6 տվյալ պաշտպանված է, նույնիսկ անվան եւ ազգանվան հատվածը. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից մեզ պատասխանեցին, որ դա կամ տեխնիկական խնդիր է, կամ դրանք անչափահասի տվյալներ են: Առաջանում է հարց՝ ինչո՞ւ է պատգամավորի հայտարարագրում եկամուտների բաժնում ներառված անչափահասի եկամուտներ, եթե այն միայն պատգամավորին է պատկանում:

Հիշեցնենք նաեւ, որ 2008-ին նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Արմեն Գեւորգյանի հորը՝ Անդրանիկ Գեւորգյանին, մեղադրանք է առաջադրվել «Մարտի 1»-ի գործով, նաեւ այն արարքի կատարման համար, որ նա թաքցրել եւ խեղաթյուրել է որդու՝ Արմեն Գեւորգյանի կողմից ստացած կաշառքի գումարի իրական բնույթն ու ծագումը եւ օրինականացրել առանձնապես խոշոր չափերի՝ 309 միլիոն դրամին համարժեք 1 միլիոն դոլարը: Գեւորգյանի կինը՝ Թամարա Գեւորգյանը, հայտարարագրել է ամուսնու հետ համատեղ սեփականությամբ հողամասը, մեկ համատեղ սեփականությամբ բնակարան եւ ավտոտնակ, որը նվիրատվություն է. տունը եւ ավտոտնակը գտնվում են Երեւանի Կենտրոն վարչական շրջանում: Թամարա Գեւորգյանի հանձնված եւ վերադարձված փոխառությունները կազմել են 7 մլն 170 հազար չեխական կրոնա, որը «Ռուբենդյան հոլդինգից» է:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 263 հազար դրամ, 549 եվրո եւ 15 հազար դոլար, որոնց փոխանցման աղբյուրները գաղտնի են: Կանխիկ դրամական միջոցները հաշվետու տարում կազմել են 30 հազար դոլար,16 մլն 500 հազար դրամ եւ 14 հազար եվրո: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 19 մլն 538 հազար դրամ, որից 8 մլն 269 հազարը ստացել է ամուսնու կողմից, իսկ 9 մլն 600 հազար դրամը նվիրատվություն է Ժաննա Արսենի Գեւորգյանից, 3 հազար եվրոն՝ Սահակյան Կարմենից:

Պատգամավորի կինը 2022 թվականին ձեռք է բերել 2 հազար 500 եվրո արժողությամբ բաժնեմաս «ՌԱԻ ԱՋԵՆՍԻ» ՍՊԸ-ից եւ հայտարարագրել է եւս երեք բաներ, որից մեկը նվիրատվություն է Դիանա Տեր-Գրիգորյանից եւ Նարինե Հովհաննիսյանից, մյուսի արժողությունը կազմում է 140 հազար կրոնային համարժեք 2 մլն 480 հազար դրամ, իսկ երրորդը՝ 25 հազար դրամ:

ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտենի գլխավոր տնօրենի ժ/պ Բաբկեն Սեդրակյանն աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Երեւանի մետրոպոլիտենի մամուլի ծառայությունից:

Մոսկվայում Բաբկեն Սեդրակյանը հանդիպել է խոշորագույն շինարարական ընկերության «Մոսմետրոստրոյ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Սերգեյ Ժուկովի հետ:

«Երեւանի մետրոպոլիտենի գլխավոր տնօրենի ժ/պ-ն կարեւորել է «Մոսմետրոստրոյ» ընկերության դերը Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցման եւ արդիականացման ծրագրի հարցում, ինչպես նաեւ առկա խնդիրները համատեղ ջանքերով լուծելու առումով»,- ասված է հաղորդագրությունում:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Երեւանի մետրոպոլիտենի զարգացմանը, վերակառուցմանը եւ արդիականացմանը վերաբերող մի շարք հարցեր: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր, որից հետո մասնակիցները շրջայց են կատարել «Մոսմետրոստրոյ» ընկերությունում:

Հիշեցնենք՝ 2022թ-ի հոկտեմբերի 13-ի նիստում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասել էր, որ «Աջափնյակ» կայարանի շինարարությունը կմեկնարկի 2024թ-ին, իսկ մինչ այդ ընթանում են նախագծման աշխատանքներ, որոնց ընդհանուր արժեքը 1 մլրդ 845 մլն դրամ է:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Երեւանի մետրոյի նոր՝ «Աջափնյակ» կայարանի նախագծի մրցույթում հաղթող է ճանաչվել ռուսաստանյան «Մետրոգիպրոտրանս» ընկերությունը: Նոյեմբերի 20-ին Երեւանի քաղաքապետարանում տեղի է ունեցել «Աջափնյակ» կայարանի նախագծման պայմանագիրը նշված ընկերությանը հանձնելու արարողությունը: Քաղաքապետարանի ծրագրով՝ 525 մետր երկարությամբ մետրոյի նոր կայարան տանող ճանապարհը պետք է անցնի թունելով, որի շինարարությունը սկսվել է դեռ ԽՍՀՄ տարիներին ու անավարտ է մնացել:

Նշենք նաեւ որ վերջերս Երեւանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը հայտարարել էր, որ շուտով մետրոյի եւս մեկ միջանկյալ կայարան կկառուցվի «Փեթակ» առեւտրային կենտրոնի հարեւանությամբ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՍՊՈՐՏԻ ԵՏՆԱԲԵՄԻՑ

ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆԸ՝ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՄԱՄԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը «Սպորտի եՏնաբեմից» խորագրով շարքի շրջանակներում զրուցել է մայիսին Երեւանում կայացած երիտասարդների բռնցամարտի Եվրոպայի առաջնությունում 86 կգ քաշային կարգում չեմպիոն դարձած Դավիթ Սիմոնյանի հետ:



16-ամյա չեմպիոնը բռնցքամարտով զբաղվում է 11 տարեկանից, մինչ այդ երկար ժամանակ լողն է եղել նրա տարերքը: Մեզ հետ զրույցում Դավիթ Սիմոնյանը կատակեց. «Ավելի շատ լողի եմ գնացել, քան բռնցքամարտի»: Նրա խոսքով՝ անցումը լողից բռնցքամարտի այդքան էլ հեշտ չի տրվել իրեն:

«Լողին զուգահեռ սկսեցի հաճախել բռնցքամարտի դահլիճ, որոշ ժամանակ անց հասկացա, որ բռնցքամարտն ինձ ավելի է դուր գալիս, քանի որ կային հարվածներ, էմոցիաներ ու ավելի մեծ հետաքրքրություն: Իհարկե, երկու սպորտաձեւ համատեղելը շատ դժվար էր, դրանցից մեկն ընտրելը՝ ավելի, բայց, ի վերջո, բռնցքամարտը «հաղթեց»»:

Դավիթի խոսքով՝ սկսել է մարզվել հարեւանի հետ, սակայն զուգահեռ սատարել են նաեւ ընտանիքի անդամները, քանի որ նրանք եւս «սպորտի մարդիկ» են:

«Հայրս նախկին ըմբիշ է: Իմ՝ սպորտում լինելու մտքին շատ լավ է վերաբերվել, մայրս էլ համակարծիք է եղել հայրիկի հետ»:

Դավիթ Սիմոնյանի հարվածներին այսօր ոչ մեկ ու ոչինչ չի դիմանում, բայց եղել է ժամանակ, երբ հարվածները համբերատար տարել է հորեղբայրը՝ Հայկը: Դավիթը պատմեց. ««Անցում» հարվածը նոր էի սովորել, առաջինը հոպարիս վրա փորձարկեցի, տեսնեմ՝ ինչպես է ստացվում: Աչքը կապտեց»:

Դավիթն այժմ ինքը կես կատակ, կես լուրջ չի ուզում՝ իր հարվածների ուժը որեւէ մեկը զգա, հատկապես՝ հորեղբայրը: Վերադառնալով չեմպիոնի կոչմանը՝ Դավիթը վերհիշում է իր ապրումները. «Անասելի հպարտ էի, որ կարողացա հենց իմ երկրում չեմպիոն դառնալ: Առանձնահատուկ առաջնություն էր հատկապես նրանով, որ ես իմ ընկերների ու հայրենակիցների ոգեւորությունը ռինգում զգում էի, ու դա ինձ ուժ էր տալիս»:

Սա Եվրոպայի չորրորդ առաջնությունն էր, որին Դավիթը մանակցում էր, սակայն առաջին անգամ էր մասնակցում՝ որպես երիտասարդ բռնցքամարտիկ: Առաջինը 2019-ին էր, որտեղ նվաճել էր բրոնզե մեդալ՝ պատանիների շրջանում:

Տարիներ անց Դավիթ Սիմոնյանը ցույց տվեց լավագույն արդյունքը՝ գրավելով առաջին հորիզոնականը: Եզրափակելով զրույցը՝ նա նշեց. «Ինձ միշտ առաջ են մղել իմ կրած պարտությունները: Ստիպել են ավելի մեծ ոգով մարզվել, քանի որ ես վստահ եմ միշտ եղել, որ թափածս քրտինքը երբեք իզուր չի կորչի, ու մի գեղեցիկ օր դրա շնորհիվ կհասնեմ այն արդյունքին, որին ձգտում եմ: Մոտիվացիան միշտ տեղում պիտի լինի. պետք չէ կոտրվել երբեք, քանի որ փոքր պարտությունները տանում են մեծ հաղթանակների»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԻՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՓԱՌԱՏՈՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Նախկին «Միկա» մարզադահլիճում հուլիսի 1-2-ը կայացավ մինի բասկետբոլի փառատոն: Այն անցկացվեց երկու տարիքային խմբով՝ 5-7 եւ 8-10 տարեկան: Ընդհանուր առմամբ, փառատոնին մասնակցում էին 120 երեխաներ: Փառատոնը կազմակերպվել էր Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի կողմից՝ մինի բասկետբոլի համակարգող Թոնի Կարամանուկյանի գլխավորությամբ: «Միանշանակ կարող ենք փաստել, որ այս փառատոնը ծառայեց իր նպատակին, քանի որ մեծ ոգեւորվածությունը երեխաների մոտ ակնհայտ էր, իսկ դա անշուշտ կխթանի բասկետբոլի մասսայականությունը հատկապես երեխաների շրջանում: Մոտ ապագայում ծրագրում ենք այսպիսի փառատոններ ավելի հաճախ կազմակերպել: Այդպիսով կկարողանանք ապահովել ակտիվ ու սպորտային ժամանց եւ մեծացնել երեխաների հետաքրքրությունը բասկետբոլի հանդեպ»,- ՀԲՖ մամուլի քարտուղարության հետ զրույցում ասաց Թոնի Կարամանուկյանը:

«ԲԱՎԱՐԻԱ»-Ն ՋԱՆՔԵՐ Է ԳՈՐԾԱԴՐՈՒՄ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» ղեկավարությունը ջանքեր է գործադրում Լոնդոնի «Տոտենհեմի» եւ Անգլիայի հավաքականի 29-ամյա կենտրոնական հարձակվող Հարի Քեյնի տրանսֆերն այս ամռանը ձեռք բերելու ուղղությամբ: «Բավարիայի» կառավարման խորհրդի նախագահ Կառլ-Հայնց Ռումենիգեն անձամբ է բանակցում Հարի Քեյնի հետ. հաղորդում է Sky Sports-ը: Հարի Քեյնը դեմ չէ կարիերան «Բավարիայում» շարունակելուն: Խնդիրը տրանսֆերի գինն է: Մյունխենյան ակումբը պատրաստ է վճարել մինչեւ 100 միլիոն եվրո: Անգլիայի ավարտված առաջնությունում Հարի Քեյնը մասնակցել է 38 հանդիպման, խփել է 30 գոլ, կատարել 3 գոլային փոխանցում:

ՀԵՐԹԱԿԱՆ ՄԵԴԱԼԸ՝ ԾԱՆՐԱՄԱՐՏԻՑ

Մոլդովայում ընթացող ծանրամարտի Եվրոպայի պատանեկան առաջնությունում Հայաստանն առաջին մեդալն է նվաճել: Մինչեւ 49 կգ քաշային կարգում բրոնզե մեդալակիր է դարձել Կարլեն Դավթյանը: Նա երկամարտում գրանցել է 181 կգ՝ պոկելով 80 եւ հրելով 101 կգ: Այս քաշային կարգում 187 կգ-ով հաղթող է դարձել բուլղարացի Ջան Ժարկովը: Մոլդովայում հանդես են գալու նաեւ Ժորա Գրիգորյանը եւ Սամվել Մարտիրոսյանը (61 կգ), Սերյոժա Բարսեղյանը (67 կգ), Հովհաննես Ղահրամանյանը եւ Նարեկ Մկրտչյանը (81 կգ), Վալերիկ Մովսիսյանը (89 կգ), Աշոտ Մարգարյանը (96 կգ), Ռուստամ Սարդարյանն (102 կգ) ու Գագիկ Մկրտչյանը (+102 կգ): Աղջիկների թիմի կազմում էլ կլինեն Մերի Միսակյանը (59 կգ), Ալինա Սուքիասյանը (71 կգ), Աննա Ամրոյանը (76 կգ) եւ Էմմա Պողոսյանը (81 կգ):

ԳՐՔԵՐԻ ՊԱՀՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ՆՇՈՒՄ Է 104-ԱՄՅԱԿԸ

Հայրենակիցների ոգեւորություն ունեցող գրքերի ոգեւոր, գրքասերների ամենասիրելի վայր. Հայաստանի ազգային գրադարանը (ՀԱԳ) նշում է հիմնադրման 104-ամյակը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ազգային գրադարանի հիմնադրման 104-ամյակին նվիրված միջոցառումների շարքը մեկնարկեց «Որոգայթ փառաց» գրքի հրատարակման 250-ամյակին եւ Շահամիրյաններին նվիրված ցուցահանդեսով:

Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Աննա Չուլյանը, շնորհավորելով բոլորին, շնորհակալություն հայտնեց գրադարանի աշխատակիցներին տարիների անձնվեր նվիրումով աշխատանքի համար:

«Արդեն երրորդ տարին է՝ ես հուլիսի 4-ին հնարավորություն ունեմ այս բեմից շնորհավորելու Ազգային գրադարանի աշխատակիցներին գրադարանի ծննդյան օրվա առթիվ: ՀԱԳ-ի պատմության սկիզբն ընդունված է համարել 1832 թվականը, երբ հիմնադրվեց Երեւանի արական գիմնազիան, որի հավաքածուի (18.000 միավոր) հիման վրա ձեւավորվեց Հայաստանի ազգային գրադարանը: 1919 թվականի հուլիսի 4-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության պետական-հանրային մատենադարանի մասին» ՀՀ օրենքը, որով պետական-մատենադարան-գրադարանն անցավ ՀՀ հանրային կրթության եւ արվեստի մինիստրության իրավասության տակ: Որոշում ընդունվեց հուլիսի 4-ը նշել որպես Հայաստանի ազգային գրադարանի օր»,- ասաց նա:

Թանգարանի տնօրենն ընդգծեց, որ 10 տարի առաջ Ազգային գրադարանը մեկնարկել է թվայնացման գործընթացը ազգային ժառանգությունը պահպանելու նպատակով:

«Այսօր մոտ 13 միլիոն թվայնացված էջերն ամբողջ աշխարհում ծառայում են մեր հայրենակիցներին: Գրադարանի գործունեությունն էլ ավելի ակտիվ դարձնելու եւ ընթերցողների համար ավելի հասանելի դարձնելու համար իրականացվող այս բոլոր ծրագրերը լինելու են շարունակական»,-նշեց թանգարանի տնօրենը:

ՀԱԳ-ում 2022 թվականի հուլիսից մինչեւ այս տարվա հունիսն ընկած ժամանակահատվածում ամենից շատ գրքեր պատվիրած՝ «Տարվա լավագույն ընթերցող» ճանաչվեց Կարեն Բաղալյանը: Ամենից շատ շրջանառված գրքի հրատարակիչ՝ «Տացքի արքա» ճանաչվեց «Անտարես» հրատարակչությունը՝ Ֆրիդրիխ Նիցշեի երկերի 6 հատորյակի տպագրության համար:

Պարգեւատրվեցին նաեւ գրադարանի 20-45 տարվա աշխատանքային վաստակ ունեցող աշխատակիցները: Իսկ «Մնխչյան» ճարտարապետական արվեստանոցը հյուրերին ներկայացրեց գրադարանի բակի վերակազմության համակարգչային եռաչափ նախագիծը:

● *Հուլիսի 6-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Լյու-Բյոֆ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1500-2500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը որոշում, թե որտեղ սկսի ուսումնասիրություններ:

Դավիթ Ալեքսանյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը ստացված տեղեկությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների, մամուլի հրապարակումների, փաստաթղթերի եւ հաղորդումների ուսումնասիրության, տեղեկատվական շտեմարանների վերլուծության եւ ամփոփման հիման վրա՝ որոշում է պետական համակարգի ռիսկային ոլորտները կամ դրանց համապատասխան մասերը եւ դրանք ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետին:

ՀՀ պետական վերահսկողության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուսումնասիրություններն իրականացվում եմ Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի կողմից տրված եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ համաձայնեցված հանձնարարագրերի հիման վրա:

ԷՋԸ՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթուղթ է շինարարության թույլտվությունը եւ քանդման թույլտվությունը:

Մանուկ Հովսեփյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի՝ ինչպես նոր կառուցապատման նպատակով տրամադրված հողամասում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում եւ շինություններում որոշակի շինարարական գործունեություն իրականացնելու իրավունքը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քանդման թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է սեփականատիրոջ կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձի՝ շենքերն ու շինությունները քանդելու իրավունքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

«Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել է, որ երեկ արտակարգ իրավիճակ է ստեղծվել Կենտրոն վարչական շրջանում: Սայաթ-Նովա փողոցում էլեկտրալարերը պոկվել են եւ ընկել մեքենաների վրա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 9 + 14 +23 + 27
Կոտայքի լեռներ	+ 9 +13 +20 + 23
Կոտայքի նախալեռներ	+18 + 20 +29 + 30
Գեղարքունիք	+9 + 13 +20 + 25
Լոռի	+10 + 15 +21 + 26
Տավուշ	+12+ 16 +25 + 29
Արագածոտնի լեռներ	+ 8 + 12 +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+18 + 20 + 28 + 33

Արարատ	+18 + 22 +35 + 37
Արմավիր	+15+ 19 +34 +36
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +21 + 23
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 21 +34 + 37
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +32 + 36
Սյունիքի նախալեռներ	+13+ 17 +24 + 28
ԼՂՀ	+17 + 21 +30 + 34
Երեւան	+17 + 19 +33 + 35

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.7.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*